

ԹԱԴԷՈՍ ՎՐԴ. ԽՈՒՄԷԹԵԱՆ, ՆԻԿՈՄԻԴԱՅԻ. — Մբ. Արմաշու վանքին. 1849 ին ուխտաւորութեամբ կ'այցելէ Ս. Յակոբի վանքը: Աղտամալեանի Քարոզգիրքը (1817) ընդօրինակելով՝ 1828 ին կ'ընծայէ Արմաշու Ս. Աստուածածին վանքին: (Արևաշ. Յուղ. թ. 113):

ԹԱԴԷՈՍ ՎՐԴ. ԿՍՅԱՅԵՅԻ. — Ուխտաւորութեամբ երուսազէմ գալու առեն ծովամոյն կը վախճանի. ինչպէս կը հասկըցուի ձեռագիր Յայանաւորի մը հետեւալ յիշատակարանէն. «... զհոգևոր հայրն զԹաղէոս կրօնաւոր Կաֆայեցին որ ի գընալն յերուսազէմ ի ծովուն ընկղմեցաւ (ՅԱ. 1910. էջ 104):

ԹԱԴԷՈՍ ՎՐԴ. ՊԱԽԱԼԵԱՆ, ԿԵՍՍՐԱՅԻ (էվքերէ). — Մբ. Ձռ. 1814 ին, ՏԲ. 1847-48 ին, կը վախճանի 1850 ին (ՄԶ. թ. 506):

ԹԱԴԷՈՍ ՎՐԴ. ԱԻԵՏԻՍԵԱՆ, ԿՈՓԵՅԻ (Տարոն). — Մբ. Ձռ. 1820 ին, կնիքը 1835, ՏԲ., ՏՌ. և ՏՅՊ. 1843 ին, 1847 ին իր ծախքով նորոգել կուտայ Ս. Յարութեան մօտ Ս. Յովհաննէս եկեղեցին. յիշատակարանն է հետեւալը. «Ի պատրիարգութեան Տ. Կիրակոսի վեհի նորոգութեան սրբոյ տաճարիս բոլոր մարմարեայ քարինք արար յիշատակ Պուլանուխցի Թաղէոս վարդապետն. վասն հոգւոյ ծնողացն Աւետիսի և Նուպարի և համայն պարագայիցն.» : Մարմարեայ քարերով շինել տուած է նաև Բեթղհէմի Ս. Աստուածածին եկեղեցիին մկրտութեան աւազանը. յիշատակարանն է հետեւալը. «Յիշատակ է աւազանս ի Բեթղհէմ Ս. Աթոռոյս երուսազէմի բնիկ միաբան Մշեցի Թաղէոս վարդապետին, յիշեցէք զինքն ի տէր և զծնողսն Աւետիս և Նուպար. 1848». կը վախճանի 1866 ին: Այս անձը հաւանաբար ա'յն Թաղէոս վրդ.ն է՝ որուն «Ժողովածու»էն Մուրաւս վարժապետ Ռոբինեան Յոպպէի մէջ ընդօրինակած է Կիպրոս կղզիին հիւսիսային արևելեան կողմը գտնուող հայերէն տապանագիրը Աշոտ իշխան Սմբատեանի: Այդ տապանագիրը հրատարակուած է 1848 Մայիս 29 ին Հայաստան թերթին մէջ. (Տե՛ս թ. 48):

ԹԱԴԷՈՍ ՎՐԴ. — 1534 թուականին ուխտաւորութեամբ կ'այցելէ Ս. Յակոբի վանքը: Ձեռագիր Մեկն. Հնգանսեկնի վարդան վարդապետի յիշատակարանին մէջ կը գտնուի հետեւալ յուշագրութիւնը. «Ես Թաղէոս վրդպս. Կնչցի. ի թվ. 229 ( =